

Գառնիկ Սահմարյան

*Իրավաբանական զիտությունների դրկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Փիլիստիվայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի գլխավոր մասնագետ*

Սմբատ Սպարապետը միջնադարի հայ ամենաերեսելի բաղաբական և գրական գործիչներից է, որը, որպես գորքերի գլխավոր իրամանատար, մինչև կյանքի վերջը սուրբ ձեռքին պաշտպանեց հայոց պետականության անկախությունն ու անվտանգությունը, որպես խոշոր դիվանագետ՝ պաշտպանեց հայոց պետականության շահերը արտաքին հարաբերություններում, որպես օրենսդիր՝ իր «Դատաստանազրբով» բավարարեց ժամանակի հայ իրականության իրավական պահանջները, որպես պատմիչ՝ իր «Տարեգրբով» զայիք սերունդներին ավանդեց ժամանակի պատմությունը և, վերջապես, որպես թարգմանիչ իր թարգմանած «Ասիզներով» կորստից փրկեց (այդ փաստարդի բնօրինակը կորած է) և համաշխարհային իրավագիտության սեփականությունը դարձրեց միջնադարի այդ իրավական հուշարձանը:

Չափազանց նշանակալի է Սմբատ Սպարապետի ներդրումը իրավագիտության ասպարեզում: Նրան մտահոգել են ոչ միայն երկրի անվտանգության և պաշտպանության հարցերը, այլև պետության ներքին բարեկարգության և կարգուկանոնի խնդիրները:

Սկզբնական շրջանում շարունակելով Լամբրոնացու գործը, նա փորձում է օտար օրենքների թարգմանությամբ բավարարել հասարակության իրավական պահանջները: Այդ իսկ առիթով թարգմանում է «Անտիռի Անսիզներ» («Անսիզ Անտիռայ») իրավական հուշարձանը: Սակայն շուտով համոզվում է, որ օտար օրենքների յուրացումը (ուցեացիա) հնարավորություն չի տալիս լիովին կարգավորելու հայոց թագավորության հասարակական հարաբերությունները և ձեռնամուխ է լինում կազմելու ազգային դատաստանագիրը, որն ամբողջովին կրավարարել հասարակության իրավական պահանջները:

Այդուհանդեռձ, «Անտիռի Անսիզները» թարգմանության շնորհիվ Կիլիկիայում ձեռք բերեց որոշակի գործնական-կիրառական նշանակություն, իսկ համաշխարհային իրավագիտության համար այն փրկեց կորստից, քանզի ասիզների բնագիրը մինչ այժմ անհայտ է:

«Անտիոքի Անսիզներ» վերնագրով օրենսգիրքը մեկն է Արևելքի լատինական պետությունների (Կիպրոսի, Երուսաղեմի, Անտիոքի և այլոց) ասիզներից:

1841թ. Փարիզում լույս են տեսել Երուսաղեմի և Կիպրոսի ասիզները երկու հատորով: Ղևոնդ Ալիշանը Սմբատի թարգմանությունը վերստին վեր է ածել ֆրանսերենի և այն հրատարակել Վենետիկում 1876թ., որանով իսկ վերականգնելով իրավական հուշարձանի բնագիրը և այն մատչելի դարձնելով համաշխարհային գիտությանը:

«Անտիոքի ասիզներ»-ը հրատարակվել է Անտիոքում, Ալիշանի կարծիքով, Բոհեմունդ 4-րդի օրոք (1201-1235): Օրենքների այդ հավաքածուն բաղկացած է երկու մասից: Առաջին մասը, որն ունի 17 գլուխ, բովանդակում է նորմեր, որոնք կարգավորում էին սենյորի և նրա վասալների փոխհարաբերությունները նրանց փոխադարձ իրավունքների ու պարտականությունների, վասալի դատական պատասխանության, նրա գույքի բոնագրավման կարգի վերաբերյալ: Հենց այս մասում կան նաև կանոններ, որոնք կարգավորում են ֆեոդալների միջև ծագող գույքային վեճերն ու քրեական գործերը, ամուսնության դեպքում խոշոր ֆեոդալների ու ասպետների գույքային հարաբերությունները: «Ասիզներ»-ի երկրորդ մասը բովանդակում է 21 գլուխ և վերաբերում է քաղաքացիների փոխհարաբերություններին: Այդ մասին նորմերը կարգավորում էին ամուսնա-ընտանեկան, հատկապես ամուսինների գույքային հարաբերությունները, սահմանում կտակ կազմելու կարգը: Մի շարք նորմեր կարգավորում են տոհմական գույքի առը ու վաճառքը, բնակարանների վարձակալությունը, գույքի գրավադրումը, ներքին և արտաքին առևտուրը, բանկիրի (մեղանավորի, դրամափոխի) առևտուրական գործառույթները, պարտապանի և պարտատիրոջ հարաբերությունները, վերջապես, որոշ նորմեր նվիրված էին քրեական իրավունքին:

Սմբատ Սպարապետի վկայությամբ «... մեր ժողովուրոր և հայկական դատարանը դեկավարվում էին այդ ասիզներով»: Դա բացատրվում է նրանով, որ Անտիոքի և Կիլիկիայի միջև գոյություն են

<sup>1</sup> «Ասիզը» (կամ ասիզներ) բառն առաջացել է «assises» բառից, որը նշանակել է դատական «միստեր», «ատյան»: Ասիզը նշանակում է դատավարական օրենսգիրը, Դատաստանագիրը:

ունեցել քաղաքական, առևտրական և մշակութային սերտ հարաբերություններ: Ըստմին, հայերի և Անտիոքի խաչակրաների միջն գործնական հարաբերությունների հողի վրա հաճախ վեճեր էին ծագում, որոնց կարգավորման համար կիրառվում էին «Անտիոքի ասիզները»: Քանի որ այդ հավաքածուն կազմված էր էին ֆրանսիական լեզվով և նրա կիրառման ժամանակ ծագում էին թյուրիմացություններ, «սխալներ էին տեղի ունենում և մեր հոգու վրա աղետ բարդվում, ուստի՝ ասում է Սմբատ Գունդասարը, - ես մեծ եռանդով ու շանասիրությամբ այն թարգմանեցի հայերենի»<sup>2</sup>: Սմբատն «Ասիզները» թարգմանել է հավանաբար 13-րդ դարի կեսերին, համենայն դեպք մինչև 1265թ., երբ կազմեց Դատաստանագիրը:

Կարելի է ենթադրել, որ «Անտիոքի ասիզները», մյուս օրենսգրքերի հետ միասին, գործնականորեն կիրառվում էին մինչև Սմբատի Դատաստանագրքի երեսն գալը, Դատաստանագիրը, որը դարձավ հայկական պետության պաշտոնական օրենսգիրքը: Ակիշանի այն ենթադրությունը, թե «Անտիոքի ասիզները» գործադրվում էին հասարակության բարձր խավերին վերաբերող գործեր քննելիս, իսկ ժողովուրդը դատվում էր հայկական օրենքներով և սովորութական իրավունքի նորմերով, կարելի է ճիշտ համարել, սակայն որոշակի վերապահումով, որ Սմբատի Դատաստանագրքի երեսն գալուց հետո Կիլիկիայի բոլոր դատարանները գործում էին այդ Դատաստանագրքի համաձայն:

Օրենսգետ և օրենսդիր Սմբատ Սպարապետի գլուխգործոցը նրա կազմած ազգային Դատաստանագիրքն է: Սմբատը իր գործն ավարտել է 1265 թվականին: Այդ Դատաստանագրքի հիմնական աղբյուրը Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագիրքն» է: Հեղինակն օգտվել է նաև հայ կանոնական և սովորութային իրավունքի նորմերից: Ըստ որում, Սմբատ Սպարապետն իր Դատաստանագիրքը կազմելիս՝ սկզբնաղբյուրներից վերցրել է միայն այն, ինչն անհրաժեշտ է եղել մի գործող, ամփոփ, ազգային օրենսգիրք ստեղծելու համար: Այս տեսանկյունից էլ նա փոփոխության է ենթարկել սկզբնաղբյուրներից վերցրած շատ նորմեր, հաճախ դրանք նորովի է խմբագրել և տվել նոր բովանդակություն՝ ենելով Կիլիկյան հայկական պետության առանձնահատկություններից և տեղական սովորույթներից:

<sup>2</sup>Տե՛ս «Вестник Матенадарана» № 4, Երև., 1958, էջ 331-375:

Օրենսգիրքը պարունակում է նոր տերմիններ վերցրած արևմտաեվրոպական և բյուզանդական իրավունքից:

Հիրավի, Սմբատի Դատաստանագիրքը արտացոլել է Կիլիկյան հայկական պետության հասարակական-քաղաքական կարգն ու իրավակարգը, հայ սովորութական իրավունքը, աշխարհիկ և հոգևոր ավատատերերի դասային արտոնությունները, դասային անհավասարությունը:

Ի տարբերություն արևմտաեվրոպական դատաստանագրքերի, որոնք հիմնականում վերաբերում են դատաստանական իրավունքին, Սմբատի օրենսգիրքը, Սիմիքար Գոշի Դատաստանագրքի նման, օրենքների մի բազմաբովանդակ ժողովածու է, որը նորմեր է պարունակում իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ: Դատաստանագրքում սահմանված են պետական և վարչական, եկեղեցական, քաղաքացիական ամուսնա-ընտանեկան, ժառանգության, դատական և դատավարական, ստրկատիրական և ձորտատիրական իրավունքի նորմեր:

Սմբատ Սպարապետը, որպես պետական և քաղաքական խոշոր գործիչ, խորապես մտահոգված էր հայկական պետականության ամրապնդման, ավատատիրական հարաբերությունների իրավական կարգավորման, ֆեռդալիզմի ծայրահեղ կողմերի հարթեցման, ինչպես նաև սվատատիրական օրինականության պահպանման համար: Կազմելով Կիլիլյան հայկական պետության Դատաստանագիրքը<sup>3</sup>, որի հիմքում ընկած է Սիմիքար Գոշի Դատաստանագիրքը<sup>4</sup>, Սմբատը լուծել է ազգային օրենսգրքի քացակայության հարցը Կիլիլիայում: Զնայած, Դատաստանագիրքը «կազմվել է անհատական ջանքերով, այսուամենայնիվ, այն ստանում է տեղական ֆեռդալ հասարակության աշրում պետական-օրենադրական նշանակություն, վայելում է պետական սանկցիայով անցած կողեծքի արժեք, որովհետև նրա կազմողը հանդիսանում էր հայ կառավարության մեջ առաջնակարգ դեր խաղացող մի անձ, թագավորի եղբայրը, որը թերևս թագավորի առաջադրանքով էր

<sup>3</sup>Տե՛ս Սմբատ Սպարապետ, Սудебник, (այսուհետև Դատաստանագիրք) Составление текста, перевод с древнеармянского /предисловие и примечание А.Г. Галстяна/, Еր., 1958.

<sup>4</sup>Այդ մասին տե՛ս Պիվազյան Էմ., Սիմիքար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերի առնակցությունը (Բանքեր Մատենադարանի, թիվ 5, Եր., 1960, էջ 117-134), Սիմիքար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատափրությամբ Խորով Թորոսյանի, Եր., 1975, Առաջարկան, էջ Լե, Ա.Գ. Ծոկնած, Исследования Киликийского армянского государства и права, Еր. 1969, էջ 185-192 և այլն:

ձեռնամուխ եղել իր օրենսգրքի հորինմանը<sup>5</sup>: Եթե Գոշի Դատաստանազիրը, գործող օրենսգիրը լինելուց բացի, նաև մի զիտական տրակտատ է պետության, իրավունքի և օրենսդրության, դատարանի ու դատավարության և հարակից այլ հարցերի մասին, ապա Սմբատի Դատաստանազիրը «իսկական օրենսգիրը է դասակարգային բովանդակությամբ ֆեռալ-ճորտատիրական կողեքս»<sup>6</sup>:

Սմբատ Սպարապետի իրավաբաղադրական հայացքները ուսումնասիրելու համար կարևոր նշանակություն ունի նաև նրա «Տարեգիրը»<sup>7</sup>, որը կազմելիս Սմբատը օգտվել է տարբեր աղյուսներից<sup>8</sup>: «Տարեգիրը» անգնահատելի աղյուր է Կիլիկյան հայկական թագավորության ներքին և արտաքին քաղաքականության հարցերը պարզաբանելու համար:

Ի տարբերություն միջևադարյան հայ մյուս մտածողների, Սմբատի իրավաբաղադրական հայացքները կրում են շեշտված աշխարհիկ բնույթ, թեպետ նա ևս չեր կարող լիովին ազատ լինել կրոնաստվածքանական մտածողությունից: Այսպես, պետության և թագավորական իշխանության առաջացմանը նա տախի է աստվածաբանական մեկնություն. «Յառաջ պատեհ համարեցաք զվիճարկեալ դատաւորացն զրել, բան յառաջ զբազաւորացն, վասն զի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, են յԱստուծոյ տեղի և է համարած ի յերկրի»: Մեկ այլ աղիթով Սմբատը նշում է, որ «թագաւորքն յԱստուծոյ են կարգած»: Թագավորին համարելով Ասնծո տեղակալը երկրի վրա, նրան օժտում է բոլոր տեսակի բարեմասնություններով և առաքինություններով: Խոսելով Գագիկ Բագրատունու մասին, Սմբատը նշում է, որ նա քաջ էր, «քարեւեսիլ եւ ահարկու, ողորմած եւ քաղցր ի վերայ ամենեցուն... եւ օգնականութեամբն Աստուծոյ զօրացեալ խաղաղացոյց աշխարհն ըստ իրաքանչյուր կերպի, գեկենեցականս եւ զիշխանս, զռամիկս եւ որ ընդ իշխանութեան նորա էին»<sup>9</sup>: Իսկ Լևոն թագավորի մասին ասում է, որ նա իմաստուն էր, «եւ հանձարեղ, զուարթ տեսլեամբ եւ առատ սրտի առհասարակ առ եկելեցականս եւ աշխարհականս, առ աղքասու եւ առ տկարս»<sup>10</sup>:

<sup>5</sup> Տե՛ս Սամուելյան Խ., հայ իրավունքի պատմություն, Եր., 1939, էջ 92:

<sup>6</sup> Տե՛ս Սուրիհասյան Ա., Սմբատ Սպարապետոր որպես պատմիչ, օրենսգետ և օրենսդիր, էջ 103:

<sup>7</sup> Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիր (այսուհետև Տարեգիր), Վենետիկ, 1956:

<sup>8</sup> Տե՛ս Սահմուկ Աբրամյան, Երևեր, հ. Դ., Եր., 1970, էջ 249:

<sup>9</sup> Նոյն տեղը, էջ 81:

<sup>10</sup> Տարեգիր, էջ 1:

<sup>11</sup> Նոյն տեղը, էջ 208:

Պետական կառավարման ձևերից Սմբատն ընտրում է իշխանության կենտրոնացված միապետական ձեր և, ըստ այդմ էլ միապետին օժոում է բացառիկ լիազորություններով. «Եւ քաջադրն մէն է որ կարէ դեկան շննել եւ քաղաք եւ բերդ եւ մեծ գետոց կանգարայ եւ հոգեսուն ի վերայ մեծ ճամբեի եւ ի կապանի երկրին»<sup>12</sup>, կամ «Ուսկեանքն քաջատրին է, եւ արծաթահանքն ի կես է ընդ երկրին պարոնն եւ ընդ քաջատրն. եւ երկաքն ու պղինձն ու կլայեկն յորում երկիր գտնուի այնոր է»<sup>13</sup>, այնուհետև «Ուսկի եւ ուկով կտա որ ի շահն ուրդի քաջատրին է»<sup>14</sup>:

Ինչո՞ւ է պայմանավորված քաջավորի անձի այդպիսի մեծարումը և բացառիկ իրավասության շնորհումը: Սմբատը, լավատեղյակ լինելով իր ժողովրդի պատմությանը, խորապես զիտակցել է, որ հայկական պետականության կործանման պատճառներից են եղել նախարարական տների կամայականություններն ու կենտրոնախույս ուժերի կործանիչ գործունեությունը, միջքեռդալական չղաղարող կրիվները: Ըսդհանրացնելով իր ժողովրդի պատմությունը՝ Սմբատը հանգեց իր ժամանակի համար միակ ճիշտ եզրակացությանը. միայն ուժեղ կենտրոնացված քաջավորությունը կարող է երկիրը պահպանել կենտրոնախույս ուժերի քայրայիշ գործողություններից և արտաքին թշնամիների ոտնձգություններից: Ելնելով ուժեղ կենտրոնացված քաջավորության շահերից՝ Սմբատը սահմանում է. «Թէ իշխան կամ այլ որ որ ի քաջադրի ծառայութիւն եւ ի հնազանդութիւն լինի, եւ իրք պատճառ այն է քաջադրին, հանց որ մեռնի իրանաւք»<sup>15</sup>: Այս իրավանորմերով Սմբատը, նախ, ապահովում է քաջավորի անձի անձեռնմխելիությունը և, երկրորդ, նախազգուշացնում է իշխաններին, որ քաջավորական իշխանության նկատմամբ ոտնձգության դեպքում նրանք խստորեն կպատժվեն, և այս տեսակետից վերջիններս քաջավորի մոտ ավելին չեն, քան իշխանական կալվածքների իրենց ճորտերը:

Կողմնակից լինելով պետական կառավարման միապետական ձևին, այնուհանդերձ, Սմբատը այն չի հասցնում արևելյան բռնակալության աստիճանի, այլ որոշակի իրավանորմերով սահմանափակում է քաջավորի իշխանությունը:

<sup>12</sup> Դատաստանագիրը, էջ 9:

<sup>13</sup> Նույն տեղը, էջ 13:

<sup>14</sup> Նույն տեղը, էջ 12:

<sup>15</sup> Նույն տեղը, էջ 15:

Ի տարբերություն Սխիթար Գոշի, Սմբատի Դատաստանագրքում որոշակիորեն շեշտված է ավատատիրական հասարակարգի դասային հիերարխիան: Եթե Սխիթար Գոշը բնական ազատության և հավասարության կողմանակից էր, իսկ մարդկանց անհավասարությունը բացատրում էր տնտեսական պատճառներով<sup>16</sup>, ապա Սմբատը ոչ միայն չի ընդունում մարդկանց՝ ի սկզբանե հավասարության գաղափարը, այլև անհավասարությունը համարում է բնական, արդարացի և հավերժական: «Կու հրամայէ աւրէնքս, որ մարդկային ազգս շատ ազգեր են, եւ են, որ ազատք են ու հեծելվորք, եւ են որ չեն եւ յայլազգ գործերն այնեն»<sup>17</sup>:

Ուշագրավ են Սմբատի հայացքները իրավունքի և օրենսդրության նպատակի, օրինականության, ամուսնա-ընտանեկան, քրեականական, աշխատանքի պաշտպանության, երեխաների կրթության, պատերազմի և խաղաղության հարցերի վերաբերյալ:

Ըստ նրա, իրավունքի նպատակն է՝ ծառայել հասարակության բարօրությանը. «Եւ արդ գրեցի զսա վսան հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ եւ գոյանալոյ երկրի, եւ վսան աշխարհական դատաւորաց եւ թագաւորաց»<sup>18</sup>:

Սմբատն ընդհանրապես տարբերում էր իրավունքի հետեւյալ տեսակները.

ա) աստվածային, բ) աշխարհիկ (պետական), գ) եկեղեցական, և օրենքների հիմքը աստվածային իրավունք է՝ տրված Մովսեսի, Ավետարանի, առաջյալների և եկեղեցու հայրերի միջոցով:

Աստվածային իրավունքը մշտնջենական և հավիտենական է: Աշխարհական օրենքները, օժոված լինելով հարկադրանքի ուժով, պետք է դիմակայեն իրավախախտումներին. «... դատաստանն բնա չունի քաւութիւն եւ ոչ խղճալ մեղանչականին... որ ի դատաստան ընկնի նա տայ իրաւունքն դարձնել զուժն եւ ըմպել զբաժակն, զոր արելինայ նա իրաւունքն այն շափով տայ իր»<sup>19</sup>:

Եկեղեցական կանոնները կոչված են կարգավորելու ինչպէս հոգևորականության վարքագիծն ու այրեակերպը, ամուսնարնտանեկան հարաբերությունների մի մասը, այնպէս եւ

<sup>16</sup> Տե՛ս «Ազատ յԱրարշէն եղեն մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղաս պիտոյից եղեն հողոյ եւ ջրոյ» (Սխիթար Գոշ, Դատաստանագիրը հայոց, իրավաբանական հետազոտութիւնը հանդերձ ծանօթութեամբ Վ. ծ.վ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 320):

<sup>17</sup> Դատաստանագիրը, էջ 148:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղը, էջ 161-162:

«բուժելու», ուղղելու այն հանցագործներին, որոնց վնասակար արարքները նվազ վտանգավոր են և որոնք մեղանչել կամ գոշացել են իրենց արարքների համար. «Կանոնը բերդ է, եւ երբ մեղանչական, իր բերնովն ասէ զիր մեղանքն նա ապաշխարութեամբ ցաւել տան, եւ զեր ի բերդ մտաւ նա փրկեցա ի մահուանէ... Ամ թէ գրջայ ու եկեղեցին դիմէ եւ ի կանոնքն նա տան անուշութեամբ դարձնել զրկանքն ու քաւել զմեղանքն»<sup>20</sup>:

Այսպիսով, Սմբատ Սպարապետն իր Դատաստանագրքով նախ՝ ձգտել է ամրապնդել և անսասան պահել հայոց պետականությունը, երկրորդ՝ բավարարել առօրյա իրավական պահանջները, երրորդ՝ կանգնած լինելով ավատատիրական օրինականության դիրքերում, ցանկացել է սանձահարել չափն անցած ավատատերերի կամայականությունները և, միևնույն ժամանակ, իրատել ստորիններին, որպեսզի վերջիններս հլու-հնազանդ ծարայեն իրենց տերերին:

Սմբատ Սպարապետի ընդհանուր իրավաբարական ուսմունքների համատեքստում առավել կարևորվում են անձի իրավական կարգավիճակի հետ կապված նորմերը, որոնք ամրագրված են նրա դատաստանագրքում:

Ի տարբերություն Մխիթար Գոշի, Սմբատի Դատաստանագրքում որոշակիորեն շեշտված է ավատատիրական հասարակարգի դասային հիերարքիսիան: Եթե Մխիթար Գոշը բնական ազատության և հավասարության կողմնակից էր, ապա Սմբատը ոչ միայն չի ընդունում ի սկզբանե մարդկանց հավասարության գաղափարը, այլև տիրող ավատական հասարակության անհավասարությունը համարում է բնական, արդարացի և հավերժականը<sup>21</sup>:

Ինչպես միջնադարյան ավատատիրական մյուս հասարակարգերը, այնպես էլ կիլիկյան հասարակությունը ստորաբաժանվում էր «ազատների» և «անազատների», «հարուստների» և «աղքատների», որն իր արտահայտությունն է զտել նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի իրավանորմերում: Այդպիսի բաժանման հիմքում ընկած էր մարդկանց և տնտեսական դրությունը, և քաղաքական անհավասարությունը: Ուստի ազատները տնտեսապես և քաղաքապես, և քաղաքականապես ազատ, տիրապետող դասակարգի ներկայացուցիչներ էին: Նրանք թագավորի գլխավորությամբ կազմում էին ֆեռալների դասակարգը: Վերջիններս իրենց ձեռքում էին պահում

<sup>20</sup> Նույն տեղը:

<sup>21</sup> Տե՛ս Շուրեն Ավագյան. «Հայ իրավական մտքի գանձարան», հ. 1, Եր., 2001, էջ 562:

ավատատիրական սեփականության և արտադրության հիմնական միջոցը՝ հռղը, որն օգտագործում էին աշխատավոր զյուղացիությանը՝ «անազաններին», շահագործելու միջոցով:

Իշխող դասակարգը կազմող ազատներն իրենց հերթին բաժանված էին զանազան դասերի աշխարհիկ և հոգևոր, խոչոր, միջին և մանր հողատերերի: Ավատատերերի հիերարխիայի դասակարգումն իր արտօհայտությունն է գտել հատկապես Սմբատ Սպարապետի Դատաստանագործի «Թագավորների և նրանց զավակների, իշխանների, ասպեկտների, եկեղեցու պրեսի և թագավորի մյուս հպատակների մասին» Ագիում:

Աստիճանակարգված հասարակությունում լիակատար իրավասույթեկտությամբ օժտված էին միայն ազատների դասը (թագավորը, իշխանները, ազատները ձիավորները, հոգևորականությունը), սահմանափակ իրավասույթեկտությամբ անազատների դասի ներկայացուցիչները շինական գորողացիները, ճորտերը:

Սակայն թագավորը, որպես «օրենքների և արդարության» պահապան, «պարսակոր է պաշտպանել աղքատներին» (հոդվ.1):

Հասարակության մյուս մասը՝ «անազատների» խումբը, բաղկացած էր ընչազուրկ խավերից, որը բաժանվում էր. ա) պետական գյուղացիներ, բ) կախյալ գյուղացիներ, գ) պարհկոսներ և դ) ստրուկներ: Շինականները (պետական և կախյալ գյուղացիները), ըստ Սմբատի Դատաստանագրքի, համարվում էին որոշակի իրավահարաբերությունների՝ սուբյեկտներ, մասնավորապես, ունեին իրենց հողամասն օգտագործման իրավունքով, իսկ «ազատ գյուղացիները» ոչ միայն անձնական ազատություն էին վայելում, այլև իրենց հողամասերին տիրում էին սեփականատիրական իրավունքով: Հասարակության ամենաստորին դասերը պարհկոսներ և ստրուկներ, չեին ճանաչվում որպես իրավունքի սուբյեկտներ, այլ դիսպուտ էին որպես իրավունքի օբյեկտներ: Չքավոր գյուղացիների մեծ մասը պարհկոսներ էին, այլ խոսքով ճորտ գյուղացիներ, որոնք, որպես կանոն, զուրկ էին տնտեսական միջոցներից և կրում էին ավատատիրական շահագործման հիմնական լուծը:

Հատ Դատաստանագրքի, ստրկության աղբյուրն են եղել, ա) գերեվարումը պատերազմում, բ) ծնունդը ստրկից տիրոջ տանը, գ) դատարանի վճռով շինականի դատապարտումը հանցագործություն կատարելու համար, դ) առուժախոր, ստրուկներին վաճառում էին որպես

սովորական ապրանք, ե) պարտապանի անվճարունակությունը, որը նրան ստրուկ էր դարձնում մինչև փրկագրումը:

Ինչպես նշեցինք, ստրուկը չէր համարվում իրավահարաբերության սուբյեկտ, այդ իսկ պատճառով նա չէր կարող ազատ մարդու ժառանգորդ լինել, եթե ստրկատերը դրա համար չէր տալիս իր համաձայնությունը: Առանց նրանց համաձայնության չէր կարելի ստրուկին հոգենոր կոչում շնորհել: Ոչ քրիստոնյա ստրուկը հավիշենական ստրուկ էր մոտև: Նա պատազգվել կարող էր քրիստոնեական հավատ ընդունելու դեպքում միայն տիրոջը փրկագին վճարելու պայմանով<sup>22</sup>:

Այսպիսով, պարզորեն ուրվագծվում է Դատաստանագրքի դասակարգային էությունը, որտեղ օրինականացվել են ավատատիրական դասային կառուցվածքը, ունենորների և ընշագուրկների տնտեսական և իրավական անհավասարությունը:

Այնուհանդերձ, Դատաստանագիրքը մի շարք ոլորտներում, ըստ եռության, հավասարապես է պաշտպանում անձի իրավունքները անկախ նրա դասային պատկանելությունից և գույքային դրույթից: Այդ ոլորտներն են ամուսնաընտանեկան, կրթական, աշխատանքի պաշտպանության և քրեակրավական հարաբերությունները:

Դատաստանագիրքն ամրագրում է ամուսնության կամավորության սկզբունքը, առանց որի ամուսնական պսակն անվագեր էր ճանաչվում: Հետևելով Սահակ Պարթևի կանոնախմբին<sup>23</sup>, Դատաստանագիրքը սահմանում է. «Օրենքը իրամայում է, եթե տղայի տարիքը տասնինինքից պակաս լինի, այդպիսի պսակն անընդունելի է, և եթե նրա տասնինինք տարին լրանա, նա կարող է թողնել կնոջը և ասել. «Ես դեռ չափահաս չէի և անտեղյակ էի», և նա ճիշտ կլինի: Եթե քահանան նման բան անի և անշափահասներին պսակի առանց իրար հավանելու, ազգականների բռնադատությամբ, պետք է կարգալույթ արվի: Դեռ ավելին, Դատաստանագիրքը պաշտպանում է կնոջ պատիվն ու արժանապատկությունը և մեղադրում այն տղամարդկանց, որոնք առանց «իրավունքի» թողնում են իրենց կնոջը և ամուսնում ուրիշի հետ՝

<sup>22</sup> Ընդհանրապես պետք է նշել, որ ստրկությունը բավական տարածված էր ևսպէս էր Կիլիկյան հայկական թագավորությունում: Կիլիկյան հատկապես XIII դ. կետերին համարվում էր ստրուկներ վաճառող շուկաներից մետքը: Ստրուկներ բերում էին տարբեր երկրներից, նրանց վաճառքը զրադարձ էին եվրոպացի և մահմետական առևտրականները (տես Միկայել Գ. Ի. Հայոց Կոլումբուսի աշխատանքները, Եր., 1952, с. 282).

<sup>23</sup> Տե՛ս Կանոնագիրը Հայոց, հատոր II, Աշխատությամբ Վազգեն Հակոբյանի, Եր., 1964, էջ 382:

դրանով իսկ ոտնահարելով «ամուսնական պսակը» Նմանների նկատմամբ «Դատաստանազիքը» նախատեսում է խիստ պատիժ. «Նրանք, ովքեր առանց երկյուղի անօրինակ կերպով բաց են թողնում իրենց հետ պսակված կնոջը, առանց անքարոյականություն կատարած լինելու կամ այլ իրավական պատճառների, տրորում են եկեղեցու ամուսնական պսակը և իրենց կանանց թողնում, օրենքը հրամայում է նրանց յոթ տարի դուրս թռղնել եկեղեցական ամեն տեսակ արարողություններից ու եկեղեցու հովանավորությունից, հաղորդություն չտալ: Բայց եթե ուղղվի, պետք է իր արածի համար կանոնական պարտավորություն սահմանեն, որպեսզի ապաշխարի և նոր միայն եկեղեցի մտնի ու հաղորդություն ստանա: Իսկ եթե այդ ընթացքում բաց թողած կինը մահանա, նա այլս չի կարող եկեղեցի մտնել և ոչ էլ ուրիշ կնոջ հետ ամուսնանալ, քանի դեռ ուր տարի չի ապաշխարել այնպես, որ եկեղեցին հավանաւություն տա հինգ տարի եկեղեցուց դուրս և երեք տարի եկեղեցու ներսում: Միայն դրանից հետո նա ազատ կիննի»:

Դատաստանազրում մեծ ուշադրություն է դարձվում երեխանների պաշտպանության, դաստիարակության և կրթության հարցերին: Դեռևս IV դ. հայ մտավորականությունը մտահոգվել և առաջ է քաշել երեխանների դաստիարակության և անվճար ուսուցման անհրաժեշտությունը: Սմբատ Սպարապետը նույնպես շարունակել է իր նախնինների բարի գործը և հատուկ իրավանորմով ձգտել է արմատախիլ անել իր ժամանակաշրջանում լայն տարածում գտած հիմնական մեթոդը՝ ծեծը. «Եթե վարդապետը ուսուցանելու ընթացքում աշակերտին այնպես հարվածի, որ վերջինս մահանա, նա նույնպես մարդասպան է, ինչպես հայրը խրատելու կամ նման որեւէ այլ իրավիճակում որդուն սպանի: Նա պետք է ապաշխարի այնպես, ինչպես եկեղեցու եպիսկոպոսները և վարդապետները կորոշեն, և դատարանի կողմից այլ պատժի չպետք է ենթարկվի: Բայց նա, ով ուսուցանելու ժամանակ սպանի, այլս չի կարող հոգևորական լինել» (հոդվ. 29): Անձի կրթության իրավունքը նույնպես պաշտպանված էր, այն էլ անվճար կրթական իրավունքով. «Օրենքը հրամայում է, որ վարդապետը երեք չվերցնի վարձ Սուրբ գրքերը կարդալու կամ եկեղեցական այլ գիտություններ սովորելու համար, որովհետև պատշաճ չէ վարձ վերցնել և ապա ուսուցանել: Այնուհետև օրենքը հրամայում է որբերին ու աղքատներին խնամել և նրանց համար աշխատանքը համեմայի դարձնել, որպեսզի նրանցից շատերը ձգտեն և ուսանելու գնան, իսկ եպիսկոպոսը և

վանքերի վանահայրերը նրանց կերակուր ու հանդերձանք տան, իսկ եթե երեխաների տէրերը (ծնողները կամ հովանավորները) ի վիճակի լինեն, կարող են միայն նրանց հանդերձանքը տալ, իսկ մնացած կարիքները պետք է վանքերը հոգան:

Եթե ուսուցանողն աղքատ լինի, և աշակերտն իր կամքով որևէ նվեր տա, դա պետք է բավարար լինի հոգեւորը սերմանողներին, որոնք այդպիսով մարմնավոր հունցը են քաղում:

Իսկ եթե աշակերտներն այդպես չվարվեն և այդ պատճառով վարդապետները նրանցից պահանջեն ու դատարանին դիմեն ասելով. «Ինչ որ մեզնից կարող էին վերցնեն, և մեզ համար օգտակար չեղան», այդ դեպքում օրենքը պահանջում է մինչև վերջին կոպեկը վերադարձնել և ըստ արժանավոյն պատժել: Հասկացողների համար այսքան բավարար է» (հոդվ. 71):

Քաղաքացիական հարաբերություններում Դատաստանագիրը պաշտպանում է սոցիալապես անապահով անձանց շահերը: Այսպես, Դատաստանագիրը, ենթով պարտապանների շահերից (այդպիսիները, որպես կանոն, հասարակության ընչազորք դասի ներկայացուցիչներից էին), սահմանափակում է գրավի ենթակա իրերի ցանկը, արգելվում էր պարտատիրոջ մուտքը պարտապանի տուն, որը դիտվում էր որպես ուժի գործադրում և հակաօրինական արարք: Գրավ կարելի էր վերցնել միայն դատարանի վճռով, այսինքն օրինական ճանապարհով: Գրավի ենթակա չեին աշխատանքի գործիքները և կյանքի համար անհրաժեշտ առարկաները. «Եթե որևէ մեկը թեզ պարտը լինի, մի մտիր նրա տուն գրավ վերցնելու այն, ինչ այնտեղ կա, որովհետև օրենքով դա հարկադրանք է համարվում, բացի այն դեպքերից, եթե դատարանի կարգադրությամբ է կատարվում, և ճիշտ կինի, եթե հետո ուրիշ մարդ է տանես:

Տանից դուրս դու կարող ես գրավ վերցնել, այն ինչ ցանկանաս: Սակայն երբեք չի կարելի գրավ վերցնել եզների լուծը, որովհետև դա գոյությունը պահպանելու և ապրուստի միջոց է: Չի կարելի ոչ ձի, ոչ էլ գրահներ վերցնել, որոնք անհրաժեշտ են պատերազմի և պարոնի (մոտ) ծառայության կարիքների համար: Դարտապանի մնացած բոլոր իրերը քո իշխանության տակ են գտնվում» (հոդվ. 126):

Անձի իրավունքների պաշտպանության հարցում ավտատիրական համակարգի պայմաններում նման իրավանորմի գոյությունն ավելի քան առաջադիմական էր: Համենայն դեպք, այն

որոշակի չափով պատնեշ էր կանգնում չափն անցած տերերի ոտնձգություններին և ամեն տեսակի շահագործմանը: Եվ ինչպես իրավացիորեն նշում է պրոֆեսոր Ա.Սուրբիայանը. «Տվյալ հարցում Դատաստանագրքի սկզբունքն այնպիսին է. գրավադրման ենթակա չէ այն ամենը, որը կենսականորեն կարենոր նշանակություն ունի գրավատուի համար, առանց որի նրա տնտեսությանը կպատճառվի անուղղելի վնաս կամ քայլայում /Existenz minitum/»<sup>24</sup>:

Դատաստանագրում ամրագրված են նաև անձի սոցիալական և աշխատանքային իրավունքների պաշտպանության հետ առնչվող որոշակի իրավանորմեր, որոնք պավատաժիրական իրականության համար, դրական առումով, այնքան էլ համահունչ չէին: Օրինակ, անձի սոցիալական և աշխատանքներին իրավունքների պաշտպանության մասին են վկայում Դատաստանագրքի 7, 131, 142, 143, 167, 169, 177, 183 և 188 հոդվածները: Մասնավորապես, Դատաստանագրքի 7-րդ հոդվածը պաշտպանում է աշխատողի աշխատանքային իրավունքները «շահագործումից». «Եթե մեկը մշակ վարձի և, կատարել տարով երկարած մի ծանր գործ, անխնա, այնքան սաստիկ աշխատեցնի, որ մշակն այդ պատճառով մեռնի կամ մարմարական վնասվածք ստանա, ապա դատավորը պետք է նկատի ունենա (նրա) ստացած վարձատրությունը, կատարած աշխատանքը և անհրաժեշտ կարիքները և, ըստ այդմ, արդարացի վճիռ կայացնի, իսկ եկեղեցին ապաշխարանքի պատիճն է սահմանում» (նույն աշխատանքին պաշտպանվածության իրավունքին է վերաբերում «Դատաստանագրքի» 167-րդ հոդվածը, որը տարածում է հասարակության սոցիալապես անպաշտպան դասի (աղքատների) վրա. «Օրենքը նաև պարտադրում է, եթե որևէ մեկը աղքատ մարդուն ճնշի և նրա վարձը ժամանակին չվճարի կամ պակասեցնի, և աղքատը բողոքի դատարանին, դատարանը պետք է ոչ միայն ստիպի վճարել, այլև տուգանք գանձել հօգուտ դատարանի»:

Անձի աշխատանքին անվտանգության պաշտպանվածության մասին նորմ ամրագրված է «Դատաստանագրքի» 177-րդ հոդվածում, որտեղ մասնավորապես ասված է. «Եթե որևէ մեկը մարդուն վտանգավոր տեղ ուղարկի աշխատելու, և նա այնտեղ սպանվի մի որոգայթի ընկնելով մահանա, նա մահացողի արյան համար

<sup>24</sup> Տե՛ս Սուրբիայան Ա.Ս., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Եր., 1978, էջ 273:

պատասխանատու է: Սակայն պետք է նկատի առնել, իր կամքով է գնացել, թե բռնությամբ է ուղարկվել: Եվ եթե իր ցանկությամբ գնացած և այդ աշխատանքի համար վարձ ստացած լինի, ուղարկողը մեղք չունի, իսկ եթե ոչ, այդ դեպքում մեղավոր է:

Այսպես նաև, եթե վարձով աշխատող լինի և ինչ-որ գործ անի, և պարոնը նրան զգուշացնի, ասելով. «Այսինչ-այնինչ բաներից զգուշացիր», իսկ նա այդպես չվարվի ու այդ պատճառով վնասվածք ստանա նա անպարտ կլինի: Հակառակ դեպքում, եթե նա անհոգաբար թույլ տվեց մարդուն փորձանքի մեջ ընկնել պատասխանատու է»:

Անձի աշխատանքային իրավունքի բովանդակության կարևորագույն բաղադրիչներից է աշխատավարձի ինստիտուտը, որը բոլոր ժամանակներում ել եղել և մնում է որպես ամենաարդիական հիմնախնդիրներից մեկը<sup>25</sup>: Խնդրո հարցում «Դատաստանագիրը» պարտավորեցնում էր գործատուին, որպեսզի վերջինս ժամանակին վճարի կատարված աշխատանքի դիմաց. «Մի գողացիր աղքատների կամ կարույցաների հասանելիքը, կամ նրանց վարձավճարը, ում քո գործերի համար քաղաք ես բերում, որովհետև Աստծո արեգակը նրանց այնպես է լուսավորում, ինչպես և քեզ, և դա (վճարը) է նրանց ապրելու հույսը»:

Եվ եթե պակասեցնես նրա վարձը, նա կրողորի Աստծուն, և Աստված նրան կլսի, իսկ եթե դատարան գնա, օրենքով պետք է նրան վճարես, և մի այդքան էլ դատարանը կզանձի քեզանից» (հոդվ. 183): Ուրեմն աշխատանքի դիմաց վարձատրություն ստանալու իրավունքն, ըստ «Դատաստանագրքի», օժոված է նաև դատական պաշտպանվածության իրավունքով, եթե գործատուն հոժարակամ չի կատարում ստանձնած աշխատանքների պարտավորությունները:

«Դատաստանագիրը» որոշակի նորմերով երաշխավորում է անձի առողջության պահպանության իրավունքը, իհարկե, միջնադարի շափանիշներին համապատասխան: Այսպես, «Դատաստանագիրը» ոչ միայն հարկերից ազատում է հիվանդանոցներին, այլև, ըստ էության, սահմանում է անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքը. «Որտեղ էլ հիվանդանոցը լինի, բոլորովին չի թույլատրվում այնտեղից հարկ վերցնել, ոչ հիվանդից, ոչ նրան սպասավորող մարդուց, հակառակ դեպքում դա կհամարվի Քրիստոսին կողրպատել» (հոդվ. 44):

<sup>25</sup> Այդ մասին ունենալու Սловарь по трудовому праву. Отв. ред. профессор К.Ш.Орловский. М., 1998, էջ 120-123; Киселев И.Я., Справник по трудовому праву. Учебник для вузов. М., 1999, էջ 188-195:

Իսկ «Դատաստանագրքի» 179 հոդվածը, կարևորելով բժշկությունն անձի առողջության պահպանման խնդրում, դիտարկվում է բժշկական սխալների պատճառներն ախտորոշման ժամանակ, և պահանջում է պատասխանատվության ենթարկել բժշկին այն դեպքում, եթե հիվանդն այդ պատճառով է մահացել. «Բժշկությունը կարևոր է մարդկանց առողջության համար: Բայց սխալների պատճառով շատ մահեր են պատահում, որոնք լինում են միտումնավոր, հիվանդությունը չհասկանալու հետևանքով, իր գործընկերներին նախանձելով, կամ որ իրենց աշակերտներին տհաս են բաց թողնում՝ իրավունք տալով բժշկությամբ զբաղվել, հաճախ էլ, երբ բազմապիսի հիվանդությունները շփորում են: Նման բոլոր դեպքերն օրենքով միտումնավոր սպանություններ են համարվում:

Իսկ հիվանդի մեղքով եղող պատճառներն այսպիսին են. կամ հիվանդը չսող է լինում, կամ սննդից, կամ նրանից, որ հիվանդը բացվում է, կամ նման այլ պատճառներով, և կամ ծառայողների (հիվանդանոցի) անփութության պատճառով: Եվ դեռ կարող է պատահել, որ բժշկին այնպիսի մեծ անհրաժեշտություն պատահի, որ բժիշկը մերժի և չկարողանա հիվանդի մոտ զա կամ բուժելու համար դեղ տա, իսկ դրանից վիճակը ծանրանա կամ նույնը պատահի վերքը բացելիս, կտրելիս կամ խատանելիս» (հոդվ. 179):

Խնդրու հոդվածում խոսքը վերաբերում է վիրահատության, հիվանդի մեղքի կամ մարմսի որևէ մասի հեռացման մասին, բայց ոչինչ չի ասում դիակի հերձման մասին, մի բան, որը խստիվ արգելվում էր մահմեղականության կողմից Արևելքում, և կաթոլիկ եկեղեցու կողմից Արևմուտքում: Միայն XVI դարում Պիոս IV պապը թույլատրել է դիահերձումը: Թեև, ինչպես հայտնի է, միջնադարի հայ մեծանուն գիտնական մատենագիրներից Հովհաննես Պլուտ Երզնկացու հաղորդումից, XIII դարում Կիլիկիայում կային բժշկական դպրոցներ, որտեղ ուսումը գուգակցվում էր գործնական փորձարարության հետ և մահապարտ հանցագործները գիտահետազոտական նպատակներով դիահերձման էին ենթարկվում<sup>26</sup>:

Անձի մասնավոր սեփականության իրավունքը միջնադարյան իրավական համակարգի կարևորագույն ինստիտուտներից էր և «Դատաստանագիրքը» մանրակրկիտ կանոնակարգել է ոչ միայն

<sup>26</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Խաչիկյան Լ. Ս., «Դիահերձումը Հին Հայաստանում. «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1947, № 4, էջ 85-90:

ավատատերերի, այլև հասարակության ցանկացած անդամի սեփականության իրավունքը: Մասնավորապես, այդ իրավունքն իր արտացոլումն է գտել «Դատաստանազրբի» 175-րդ հոդվածում: «Եթե որևէ մեկն անօրինականորեն ուրիշի ունեցվածքը սեփականացնի, պետք է քառակի վճարի, որից հետո իր մեղքն ապաշխարությամբ քավի, կամ թող աղքատներին բաժանի և դա ընդունելի կլինի: Եթե արհեստավորը որևէ մեկի իրը գողանա, պետք է քառակի վճարի, իսկ եթե ոչ, պետք է աղքատներին բաժանի, որից հետո իր մեղքն ապաշխարությամբ քավի»:

«Դատաստանազրբը» որոշակիորեն պաշտպանում էր նաև սպառողների օրինական շահերն ու իրավունքներն անքարեխիղձ վաճառողներից: «Մովսեսն Աստծո անունից իրամայում է. եթե մարդը խարում է իր ընկերոջը և արատավոր իրը որակյալի փոխարեն է ծախում, թող նա անիծյալ լինի, իսկ վաճառված իրը հետո վերադարձնի: Իսկ արատներն այնպիսիք են. եթք (վաճառված կենդանին) քաջի կամ հարու տվող է լինում կամ մարմնում զադտնի հիվանդություն է ունենում այնպես, որ ուրիշ մեկը ժամանակին չի կարող նկատել: Բայց եթե նկատի և թերությամբ հանդերձ գնի, պետք է անվերադարձ իրեն պատկանի: Եթե գնողը ծովության պատճառով չի գննում իրերը, և թերությունն աննկատ է մնում, այդ դեպքում մեղավորը գնողն է, որովհետև ինչու ինքը չեր գննում ապրանքը»:

Սակայն յուրաքանչյուր վաճառող պետք է վախենա Աստծո պատժից և հայտնի իր վաճառածի թերության մասին, որից հետո գնորդն այլևս չի կարող իրը հետո վերադարձնել» (հոդվ. 142):

Անձի քրեականավական պաշտպանության տեսանկյունից, Ամբատ Սպարապետի «Դատաստանազրբը» շատ ուշագրավ նորմեր է պարունակում:

Ըստ «Դատաստանազրբի՝ հանցագործությունն արարք է, որի հետեանքով իրավախախտը ոտնահարում է աստվածային ու աշխարհիկ օրենքները և վնաս է պատճառում ուրիշներին: Ըստ որում, հանցագործության սուբյեկտը մարդն է և այն էլ մեղսունակ և որոշակի տարիքի հասած: Որքան էլ ծանր լինեն հանցագործության հետևանքները, եթե հանցագործը անմեղսունակ է, ապա նա ազատվում է պատասխանատվությունից: «Եթե որևէ մեկը չափահաս տարիքի լինի և չարամտորեն ուշադրություն կստանա, կամ այնպիսի գործի մեջ

ներքաշվի, որի պատճառով (մարդը) մահանա, այդ դեպքում ինքը մահապարտ է:

...Իսկ եթե հանցանք կատարողը երեխա լինի, անհրաժեշտ է նկատի առնել տարիքը և համապատասխանաբար վարվել...» (հոդվ. 182):

Դատաստանագրում ամրագրված է նաև քրեական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը, պատժի և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, որը «բունցքի իրավունք» դարաշրջանում խիստ անհրաժեշտ և մարդասիրական մոտեցում էր, քանի որ այդ ժամանակաշրջանում՝ որպես կանոն, կիրառվում էր, այսպէս կոչված, օբյեկտիվ մեղսայնացման ինստիտուտը՝ այսինքն անձին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման էր համարվում վնաս հասցնելը կամ կատարված հանցավոր արարքի տուկ փաստը<sup>27</sup>:

Պատժի անհատականացման սկզբունքն ամրագրված է Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» 124-րդ հոդվածում, որտեղ մասնավորապես նշված է. «Եթե որդին օրենքով մահապատժի դատապարտվի, նրա հորը չպետք է բանտարկել, և ոչ էլ եղբարը: Նույնիսկ եթե հայրը կամովին ցանկանա որդու գործած հանցանքի համար ինքն իրեն զոհ բերել, չի կարելի ընդունել, որովհետև արդարադատությունը պահանջում է, որ ամեն մարդ իր զիսով պատասխան տա»:

Բացի դրանից, պատիճ նշանակելիս, դատարանը պետք է հաշվի առնի նաև հանցանք կատարած անձի տարիքը, շարժադիրները, միտուսները, բարոյահոգեքանական վերաբերմունքը կատարվածի նկատմամբ, այսինքն անձը զոջում է իր արարքի համար թե ոչ: Եվ այս բոլորի համակցությամբ միայն կարելի է արդար դատավճիր կայացնել: Իսկ եթե հանցանք կատարողը երեխա լինի, անհրաժեշտ է նկատի առնել տարիքը և համապատասխանաբար վարվել, ինչպես և հաշվի առնել հանցանքի չարակամությունն ու ոխակալությունը, կամավոր, թե ակամա լինելը, նաև այն, թե սպանությունից հետո տրվում ու լաց է լինում, թե ներքուստ և արտաքուստ ուրախանում է և իննդում է...» (հոդվ. 182):

Անձի քրեաֆիրավական պաշտամանվածության մասին է խոսում նաև անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի ամրագրումը «Դատաստանագրքում», որի դեպքում անձն ընդհանրապես ազատվում է

<sup>27</sup>Տե՛ս Կուլյակով Ա. Ա., Կурс уголовного права. СПб., 1995, էջ 168-174 և այլն:

քրեական պատասխանատվությունից և, նույնիսկ խրախուսանքի է արժանի. «Օրենքը պատվիրում է, եթե որեւ մեկն իր ճանապարհով գնում է, իսկ ուրիշները կանգնում և փակում են ճանապարհը սպանության կամ գողություն անելու նպատակով, և այն ազնիվ անցորդ հաջողակ լինի և ավագակներին սպանի, նա արյան համար պարտական չպետք է լինի, այլ գովերգի և պարզնատրման է արժանի» (հոդվ. 163):

Անձի իրավունքների դատական պաշտպանվածության մասին որոշակի ենթադրություններ կարելի է անել «Դատաստանագրքի» այն հոդվածներից, որտեղ խոսքը գնում է դատարանի և արդարադատության մասին<sup>28</sup>:

Եվ, պատահական չե, որ «Դատաստանագրքի» առաջարանում հենց նշում է արդարադատության նշանակության մասին, «որ «Դատաստանագիրըն», ամենից առաջ գրվում է «դատավորների և թագավորների օգտագործման համար», ինչպես նաև խոսվում է «օրենքների և արդարության պահպանման անհրաժեշտության մասին»: Հարցեր, որոնք բոլոր ժամանակներում արդիական են, արդիական են նաև ներկա օրերում, երբ մեզանում դեռևս շարունակվում է դատաիրավական բարեփոխումների գործընթացը:

Արդարադատությունն, ըստ Դատաստանագրքի, պետք է իրականացվի օրենքի և օրինականության հիման վրա: Օրինականությունը պետք է պահպանվի բոլորի կողմից, այդ թվում նաև թագավորի: Երկրի գերագույն կառավարիչը պարտավոր է անաշառ դատավարություն իրականացնել և, ընդհանրապես, վերահսկել արդարադատությունը, որպեսզի այն լինի անկաշառ և օրինական. «Թագավորը Քրիստոսի արդարադատության օրինակով պարտավոր է դատ անել կշռադատված, անաշառ, անկաշառ և առանց ծովության, լսել բոլոր գրկածների ու բողոքավորների դատը, արդարադատ վճիռ կայացնել նրանց նկատմամբ» (հոդվ. 1):

Այս առումով «Դատաստանագիրը» կշտամբում է կաշառակերությունը և սահմանում է խիստ պատիճներ արդարադատությունը խեղաթյուրելու համար. «Մեր օրենքը և

<sup>28</sup> Միջնադարյան Հայաստանի դատարանի, դատարանակազմության և արդարադատության մասին մասնամասն տե՛ս Խօսք Տօրօսյան, Суд и процесс в Армении X-XIII вв. Ер., 1985, նույնի Судоустройство и судопроизводство в средневековой Армении по Судебнику Мхитара Гоша. Автореферат диссертации на соискание ученой степени канд. наук. Ереван, 1966:

առավելական կանոնները իրամայում են, եթե եկեղեցական կամ աշխարհական դատավորի նվասումամբ ապացուցվում է, որ կաշառքով ծախում է աստվածային արդարադատությունը, ապա նրան զրկում են աթոռից և, որպես Աստծոն դավաճանողի, ենթարկում են պատժի, քանի որ Չուղայի նման ծախել է Աստծո արդարադատությունը» (հոդվ. 10):

Անձի և ժողովուրդների իրավունքների պաշտպանության համատեքստում խիստ արժեքավորում են նաև «Դատաստանագրքի» այն նորմերը, որոնք վերաբերվում են պատերազմի և խաղաղության հարցերին: Այդ նորմերը դատապարտում են անարդարացի պատերազմները և սանկցիաներ են սահմանվում պատերազմի մեղավորների նկատմամբ. «Եթե թագավորը կրվի մեջ գտնվի և նրա սուրը հաղթի, պատշաճ չէ այլևս մարդ սպանել, բացառությամբ այն այլազգիների, որոնք կովի պատճառն են եղել: Եթե թագավորը քաղաքը շրջապատած և առնելու վրա լինի, նա պետք է երեք անգամ ձայնել տա. «հնազանդության եկեր», «Անձնատուր եղեք»: Եթե հայտնվում են, նա բոլորին հնազանդեցնում է և թույլ չի տալիս սպանել, իսկ եթե չեն հանձնվում, նա միայն մեղավորներին է սպանել տալիս, իսկ նրանք, ովքեր մեղանշում են ու մեղանշում են գալիս նրանց խոշտանգումների է ենթարկում, բայց չի ստանում և թույլ տալիս այդ երկրի այգիները կտրել» (հոդվ. 1):

Այսպիսով, կարելի է ընթիանրացնել, որ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», որը գործել է Կիլիկիայի հայկական թագավորությունում, որոշակիորեն պաշտպանել է անձի իրավունքները, իհարկե, ավատական հասարակության և դարաշրջանի իրավամտածողության և իրավագիտակցության սահմաններում, չնայած, ինչպես տեսանք, մի շարք նորմեր արդիական և առաջավոր են եղել ինչպես ապրած դարաշրջանի, այնպես էլ հետագա դարերի համար:

Իրավունքի զարգացումը հետագա դարերում ունեցել է որոշակի առանձնահատկություններ, որոնցից հիմնականը նրանում է, որ XVIII-XIX դր. իրավական հուշարձանները ձևավորվել են հայրենիքից դուրս հայկական գաղթօջախներում<sup>29</sup>:

Ժամանակագրական կարգով այդ հուշարձաններից առաջինը Աստրախանի Հայոց դատաստանագիրքն է, որի ստեղծման

<sup>29</sup> Հայկական գաղթօջախների մասին մանրամասն տե՛ս Հրայր Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002:

աշխատանքները սկսվել էին 1747-1748թթ. և ավարտվել 1765թ.<sup>30</sup>: «Դատաստանագիրքը» ոչ միայն լուսաբանում է Աստրախանի, Ղզլարի, Մողոլի, Նոր Ղաջիջնանի պատմությունը, քանի որ այն կիրառվել է նշված շրջանների հայկական դատարանների կողմից, այլև պատկերացում է տալիս XVI-XVII դարերի Ռուսաստանի տարբեր շրջաններում հիմնավորված հայերի սոցիալ-իրավական դրության մասին<sup>31</sup>:

Հայկական գաղթօջախների շնորհիվ այդ շրջաններում զարգացել են մետաքսագործությունը և զինեգործությունը: Չնայած ոռւս վաճառականները բազմից բողոքել են դատական իշխանությունների կողմից հայ վաճառականների համար սահմանված արտոնությունների դեմ, այնուամենայնիվ, ոռւսական կառավարությունը, ենելով հիշյալ շրջաններում առևտրի և արտադրության զարգացման անհրաժեշտությունից, հետագայում ոչ միայն չերանայեց 1667թ. պայմանգրով նախատեսված հայ վաճառականների արտոնությունները, այլև 1673թ. վերահստանութեցին մի շարք լրացուցիչ արտոնություններ, ավելի խթանեցին առևտրի և ապրանքափոխանակության շրջանառությունները Ռուսաստանի հարավում: Դեռ ավելին, դատական կառավարության Սենատը 1746 թվականի օգոստոսի 26-ի հրամանագրով սահմանեց, որ «Աստրախանում ապրող հայերին, կարողիկներին և մուս օտարերկրացիներին ... զիսահարկ չգրել ... և զիսահարկերը նրանցից ... տարիներ հետո (անցած 20 տարիների համար) չգանձել»<sup>32</sup>:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում են XIII դարի մեծ գորավար, օրենսդիր և օրենսգետ Սմբատ Սպարապետի պետականական հայացքները, որոնք հիմնականում արտացոլվում են նրա «Դատաստանագրքում»:

Դատաստանագիրքը գործադրվել է Կիլիկիայի հայկական պետությունում, մեզ են հասել Դատաստանագրքի բազմաթիվ

<sup>30</sup>Տե՛ս Դատաստանագիրք Աստրախանի Հայոց: Աշխատասիրությամբ Ֆ.Գ.Պողոսյանի: Եր., 1967թ.: Ռուբեն Ավազյան, «Խամաստ ուրվագիծ այն պայմանների, որուց սովորությամբ մշակվել ընդունվել և կիրառվել է՝ «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»: «Օրենք և իրականություն», 21 նոյեմբերի 2002թ., էջ 13-14: Դատաստանագրքի ոռուերեն թարգմանությունը տե՛ս Ավագին Բ. Օ., Պամյանի արմանական օրենսդրությամբ»:

<sup>31</sup>Տե՛ս Խաչատրյան Վ.Ա., Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века. // Известия АН Арм.ССР, 1963, №12:

<sup>32</sup>Տե՛ս Ռուբեն Ավազյան, Հայ իրավական մտքի զանձարան, հասոր 2, Եր., 2002, էջ 204:

Ճեղագրեր (խմբագրություններ), որոնք նույնպես արտացոլում են գործադրման մասին»:

Սմբատ Սպարապետի Դատաստանագիրը իր ժամանակաշրջանի նշանավոր դատաստանագրերից է ողջ միջնադարում:

Քանայի բառեր. Դատաստանագիրը, մարդու իրավունքներ, ավանդական օրինականություն, իրավունք, արդարություն:

## ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВЫЕ ВОЗЗРЕНИЯ СМБАТА СПАРАПЕТА

Гарник Сафарян

*Доктор юридических наук, профессор  
главный специалист Института  
философии, социологии и права, НАН РА*

### РЕЗЮМЕ

В данной статье подробно обсуждаются политикоправовые взгляды великого полководца, законоведа и законодателя XIII века Смбата Спарапета, которые в основном отражены в его Судебнике (1265г.).

Судебник действовал в Киликийском армянском государстве, до нас дошло множество рукописных экземпляров, что также свидетельствует о его применении.

Судебник Смбата Спарапета является одним из выдающихся судебников своего времени и во всем средневековье.

**Ключевые слова:** судебник, права человека, феодальная законность, право, справедливость.

### THE LEGAL CONCEPT OF SMBAT SPARAPET

Гарник Сафарян

*Doctor of Law, Professor, Main Researcher of the  
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA*

### SUMMARY

In this article we present a detailed analysis the XIII century of greatest Armenian lawyer and legislator Smbat Sparapet's legal concepts and views, which are mainly reflected in his «Judicial Book» (1265).

Smbat's judicial book was the substantial Codex for its times in the middle Ages.

**Key words:** judiciary, human rights, feudal legality, law, justice.